ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՐԺԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Շորժա համայնք, հասցե՝ գ.Շորժա ,
հեռ. 093493792,էլ. փոստ՝ shorja.gyuxapetaran@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՐԺԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ N 18 ՈՐՈՇՈՒՄ

«01 » օգոստոսի 2017թ.

ՇՈՐԺԱ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 05-074-0207-0004 ԾԱԾԿԱԳՐԻց ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 3,34776 ՀԱ 5-ՐԴ ԿԱՐԳԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ,ԿԱՊԻ ,ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ,ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ/

<< ԱՐԱՑ >> ՍՊԸ-ն դիմել է Շորժա համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայի 3.34776 հա վարելահողի նպատակային նշանակությունը էներգետիկայի ,կապի ,տրանսպորտի ,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատոգորիայի փոփոխման և արևային ֆոտովոլտային կայաններ կառուցելու համար:

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով.

Համայնքի ավագանին որոշում է.

1.Շորժա համայնքի ավագանու 02.09.2013թ. N 13 որոշմամբ հաստատված համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծում կատարել հետևյալ փոփոխությունը.

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին կետի, 6-րդ գլխի 14-րդ և 15-րդ հոդվածների պահանջներով Շորժա համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 05-074-0207-0004 ծածկագրով առանձնացված 3.34776 հա 5-րդ կարգի վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու համար:

2. Խնդրել ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը

Կողմ՝(4) , Դեմ՝(0) Ձեռնպահ՝(0)

Հ.Մուրադյան
Ա. Ավալյան
Վ. Սարգսյան
Է.Ղուկասյան

Համայնքի ղեկավար՝ Ս.Ծուշանյան